ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 13-19-ը Համաշխարհային Մաքսային Կազմակերպության Մաքսային Արժեքի Տեխնիկական Կոմիտեի 59-րդ նիստին մասնակցելու նպատակով ք. Բրյուսել իրականացված գործուղման արդյունքների վերաբերյալ

1.Անունը, ազգանունը.

Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ՊԵԿ Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության պետի տեղակալ

Տիգրան Բակլաչյան՝ ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի պետի տեղակալ

2.Գործուղման վայրը և ժամկետները.

Համաշխարհային Մաքսային Կազմակերպություն, Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2024թ. հոկտեմբերի 13-19

3.Հրավիրող կողմը.

Համաշխարհային Մաքսային Կազմակերպության Մաքսային Արժեքի Տեխնիկական Կոմիտե՝ ՄԱՏԿ (**TCCV**)

4.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցությունը Համաշխարհային Մաքսային Կազմակերպություն Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի 59-րդ նիստին, որի նպատակն է պարբերաբար քննարկել ապրանքի մաքսային արժեքի որոշման, Համաձայնագրի դրույթների միանման կիրառման հիմնահարցերը և դրանցից բխող համապատասխան որոշումների ընդունումը

5.Քննարկված թեմաները.

Կուտակված զեղչերի հաշվարկումը մաքսային արժեքում՝ էլեկտրոնային առևտրի վաճառքի դեպքերում.

Առաջարկվել է Ուրուգվայի կողմից

«Ներմուծվող ապրանքների գինը» արտահայտության օգտագործումը համաձայնագրի 1-ին հոդվածի մեկնաբանական ծանոթագրության 4-րդ կետի համաձայն.

Առաջարկվել է Ուրուգվայի կողմից

Մաքսային արժեքի գործարքի գնի կիրառման առանձնահատկությունները կրիպտոարժույթի միավորներով համաձայնեցված գործարքների համար.
Առաջարկվել է Ուրուգվայի կողմից

Առևտրի և Սակագների Գլխավոր Համաձայնագրի VII գլխի կիրառման Համաձայնագրի (այսուհետ Համաձայնագրի) 1.2 (ա) հոդվածի համաձայն փոխկապակցված կողմերի գործարքներն ուսումնասիրելիս տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերի օգտագործումը.
Առաջարկվել է Բրազիլիայի կողմից

Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն բեռնափոխադրումների և բեռնափոխադրումների վճարների գնահատման մոտեցումը.
Առաջարկվել է Մավրիկիոսի կողմից

Համաձայնագրի 1.2 (ա) հոդվածի համաձայն փոխկապակցված կողմերի գործարքներն ուսումնասիրելիս տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերի օգտագործումը.
Առաջարկվել է Ուրուգվայի կողմից

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մոտեցումը, այն դեպքերում, երբ տրամադրվում են լրացուցիչ ապրանքներ համաձայն գնված ապրանքների քանակների
Առաջարկվել է Կորեայի կողմից

Համաձայնագրի 1-ին հոդվածի կիրառման որոշ առանձնահատկություններ
Առաջարկվել է Վիետնամի կողմից

Գնորդի կողմից ապրանքի դիմաց չվճարումների դեպքում մաքսային արժեքի որոշման ժամանակ կիրառելի վերաբերմունքը.
Առաջարկվել է Ուրուգվայի կողմից

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

5-րդ կետում նշված բոլոր թեմաներով իրականացվել են խորացված քննարկումներ, որի ընթացքում բոլոր անդամ պետությունները ներկայացրել են իրենց տեսակետները, դիտողություններն ու առաջարկությունները՝ բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն: Միջազգային Առևտրաարդյունաբերական Պալատի՝ ICC-ի կողմից ներկայացվել է նաև ապրանքների վաճառքի և գնման գործակալների վերաբերյալ հանգամանալից շնորհանդես, որում վեր էին հանվել ժամանակակից այս ոլորտում տեղի ունեցող տեղենցները և զարգացումները, դրանց ազդեցությունը ձևավորվող մաքսային արժեքի վրա:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մաքսային արժեքի գործարքի գնի կիրառման առանձնահատկությունները կրիպտոարժույթի միավորներով համաձայնեցված գործարքների համար հիմնահարցի կարգավորման ուղղությամբ ՀՄԿ ՄԱՏԿ կողմից ընդունվել է համապատասխան որոշում, վերջինս կիրապարակվի ՀՄԿ 3 պաշտոնական լեզուներով և կստանա իրավական ուժ:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ: Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի նիստերի մասնակցությունը կարևորվում է հատկապես մաքսային արժեքի հսկողության նոր գործիքակազմերի, մաքսային արժեքի թերհայտարարագրումները բացահայտելու նոր մեթոդների ուսումնասիրության առումով: Հաշվի առնելով անդամների լայն մասնակցությունը, իրականացվել է նաև մաքսային արժեքի հսկողության ընթացքում ինչպես առաջավոր, այնպես էլ զարգացող պետությունների փորձի և մոտեցումների ուսումնասիրություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Տիգրան Սարգսյան _____

Տիգրան Բակլաչյան _____

22.10.2024թ.